Պարույր Սևակ

Կորցրեցի և գտա

Կորցրրեցի և գտա...
Եվ սկսվում եմ կարծես
Ու գալիս եմ այնտեղից,
Ուր շողերը տակավին բազմագույն են,
և որտեղ
Քամիներն են գոյանում...
Կորցրեցի և գտա...
Ու ձեռքերրս համրացած
Սկսում են նորից-նոր հնչեղություն ստանալ...
Եվ հավատում եմ նորից,
Որ այս անգամ ես ու դու
Կկառուցենք վերջնական բաբելոնյան աշտարակ՝
Միշտ խոսելով նո՛ւյն լեզվով...
Ու չեմ անցնում այլևրս քնի կողքով:
Ես հիմա,
Արդեն հոգնած, բայց հանգիստ՝
Մե՛կ վայրկյանում կքնեմ արշալույսի ձեռքերին,
Մանկան նման անխռով...
Ու դեռ եթե չեմ քնում,
Ապա լոկ այն պատճառով,
Որ զգում եմ, թե հիմա ես կարող եմ և կանեմ

Ա՛յն, ինչ անվերջ կամեցել և ուզել եմ ո՞ղջ կյանքում.
Խոսել առանց որևէ բաղաձայնի՝
ողողանջել
Համատարած - համասփյուռ ձայնավորո՛վ միմիայն...
Ու ժպտում եմ ես կրկին,
Ու բարի եմ ես այնքան,
Որ կարող եմ նմանվել այն արագիլ թռչունին,
Որին հարց են երբ տվել,
Թե ինչո՞ւ է նա կանգնում իր մի ոտին շարունակ,
Պատասխանել է այնպես,
Կարծես թե ես եմ հուշել.
-«Որպեսզի բեռն աշխարհի թեթևանա գեթ մի քիչ»...
Եվ այս բոլորը՝
միայն
Երկու բառի շնորհիվ.
-«Կորցրրեցի» և «գտա»...

16.IV.1961թ.
Մոսկվա